ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 30. Զգուշացումը և ընդերքօգտագործման իրավունքի դադարեցումը

1. Ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվում է ~~միայն~~ սույն օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով:

2. Լիազոր մարմինը ընդերքօգտագործման իրավունք կրող իրավաբանական անձին կարող է տալ գրավոր զգուշացում, եթե նա՝

1) չի կատարում սույն օրենսգրքով նախատեսված պարտավորությունները.

2) չի կատարում ընդերքօգտագործման իրավունքի պայմանները, այդ թվում՝ ընդերքօգտագործման պայմանագրով, ծրագրով կամ նախագծով ընդերքօգտագործման իրավունքով նախատեսված իր պարտավորությունների իրականացմանն առնչվող պայմանները, բացառությամբ գործադուլների, տնտեսավարողից անկախ պատճառներով ծառայությունների ընդհատումների՝ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և այլ դեպքերի, անհաղթահարելի ուժի՝ հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, փոթորիկների կամ այլ բնական աղետների, ինչպես նաև պայթյունների, պատերազմի, ահաբեկչության, քաղաքացիական պատերազմի, անկարգությունների, ապստամբության, ազգայնացման և այլն, որոնք 90 օրվա ընթացքում անհնար են դարձնում աշխատանքների կատարումը, և լիազոր մարմին են ներկայացվել համապատասխան փաստերը վկայող փաստաթղթերը.

3) չի վճարել օրենքով նախատեսված վճարները՝ սահմանված օրվանից մեկ ամսվա ընթացքում:

3. Լիազոր մարմինն իրավունք չունի որոշում ընդունելու ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման մասին, եթե իրավունք կրողը զգուշացման մասին ծանուցումը ստանալուց հետո՝ ոչ ավելի, քան 90 օրվա ընթացքում, վերացրել է նշված հիմքերը:

~~4.~~ 4.Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցները, որոնք առնչվում են թույլտվության գործողության կասեցմանը կամ դադարեցմանը, կիրառվում են սույն հոդվածով նախատեսված զգուշացման ընթացակարգը կիրառելուց հետո:

5. Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցումն ուժի մեջ չի կարող մտնել, քանի դեռ ավարտված չեն ընդերքօգտագործման իրավունք կրողի նկատմամբ վերջինիս իրավունքների հետ կապված դատավարական սկսված գործընթացները:

~~5~~6. Ընդերքօգտագործման իրավունքը, բացի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված հիմքերի, դադարում է նաև, եթե՝

1) լրացել է ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետը.

2) լուծարվել է ընդերքօգտագործող իրավաբանական անձը, կամ ընդերքօգտագործողը դադարել է անհատ ձեռնարկատեր լինելուց.

. ~~Ընդերքօգտագործման իրավունքը դադարում է, եթե՝~~

~~1) լրացել է ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետը.~~

~~2) լուծարվել է ընդերքօգտագործող իրավաբանական անձը, կամ ընդերքօգտագործողը դադարել է անհատ ձեռնարկատեր լինելուց.~~

~~3) լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը.~~

~~4) ընդերքն օգտագործվել է ոչ այն նպատակով, որի համար տրամադրվել է.~~

~~5) ընդերքօգտագործողը հայտնաբերել և լիազոր մարմնին 14 օրվա ընթացքում չի տեղեկացրել՝~~

~~ա. ընդերքօգտագործման իրավունքում չնշված օգտակար հանածոների կուտակումների հայտնաբերման մասին,~~

~~բ. հազվագյուտ և գիտամշակութային արժեք ներկայացնող օբյեկտների առկայության մասին,~~

~~գ. չնախատեսված էկոլոգիական ռիսկերի ի հայտ գալու մասին:~~

~~6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում լիազոր մարմինն իրավունք ունի միակողմանի լուծելու ընդերքօգտագործման պայմանագիրը:~~

7. Ընդերքօգտագործման իրավունքը կարող է դադարեցվել նաև հասարակության և պետության կարիքների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցումը հիմք է ընդերքօգտագործման նպատակով հատկացված հողամասի նկատմամբ ընդերքօգտագործողի իրավունքների դադարեցման համար: